# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2021 թվականի _______ __-ին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածում՝

- 4-րդ մասից հանել «, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի» բառերը.
- 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2. Օրենսգրքի** 71-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետը և 3-րդ կետի «դ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաև Օրենսգրքի 79-րդ հոդվածով» բառերը:

**Հոդված 4.** Օրենսգրքի 79-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 5. Օրենսգրքի** 121-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից հանել «Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև» բառերը»:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի դրույթները գործում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը՝ Օրենսգրքի 79-րդ հոդվածով ծագած հարաբերությունների ավարտը: